




Կարգադրանք

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԷԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Քիչ 29



ՏՄԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





מגילת אסתר

ספר אסתר

המלך אחשורוש

המלכה וסתר

המלך אחשורוש

המלכה וסתר

המלך אחשורוש

המלכה וסתר

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԻՍ ❧ هانراکيداق ❧ HANRAKIDAGUE

ՇԱՐԲԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 29 || 19 ՅՈՒԼԻՍ 1903



ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՄԵԼՔԻՍԵՂԵԿ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Մ Ո Ւ Ր Ա Տ Ն Ա Ն Յ

(Ծնեալ 1836 , վախճանեալ 1903)

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻՍՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՋ

34. — Յօժարութեամբ պէտք է անձնուէր լինիլ

Զապէ՛լ, ըսաւ մայրը, այսօր շատ տկար եմ, առանց մեծ յոգնութեան պիտի չկրնամ կարել եղբօրդ զգեստը, որուն շատ պէտք ունի: Որովհետեւ այսօր հինգշաբթի է և դու դպրոց չես երթար, արդեօք չե՞ս կրնար այս կարը վերջացնել:

Զապէլ շատ ցած ձայնով կը պատասխանէ. « Այո՛, մայրիկ », թիուած կերպով մը կը նստի պատուհանին մօտ եւ կ'սկսի կարել: Մի և նոյն ժամանակ կը խորհի այն հաճոյքին վրայ, որ պիտի վայելէր անտառ երթալով կաղին քաղել կամ դաշտին մէջ ծաղիկ հաւաքել, իր բարեկամներուն հետ խաղալ, փոխանակ դերձակուհիի մը պէս նստիլ եւ կարել: Նա անձնուէր կը լինի, որովհետեւ պէտք է, բայց իր ըրած զոհողութեան չափը կ'զգացնէ և մայրը այս բանին կը վշտանայ:

Տղա՛ք, եթէ դուք անձնուիրութիւն ընէք, յօժարութեամբ ըրէք: Անձնուիրութեան գլխաւոր արժանիքը կը կայանայ անցեմարեի ընելուն մէջ:

35. — Անձնուիրութեան քաղցրութիւնը

Փոքրիկ աղջիկ, դու թերեւս դեռ չգիտես անձնուիրութեան քաղցրութիւնը. դու դեռ չգիտես թէ մարդ ճշմարիտ ուրախութիւն կ'ունենայ ինքնիրեն հակառակելով՝ ուրիշին հաճելի լինելու համար, իր սիրած բանէն զրկուելով ուրիշը երջանկացնելու համար:

Դու հակառակ քու մատաղ հասակին, արդէն կրնաս շատ բան ընել քեզ չըջապատողներուն համար: Դու կրնաս զանոնք նեղութենէ մը ազատել՝ դու ինքդ նեղուելով. դու կրնաս անոնց՝ մօրդ տեղ աշխատութիւն մ'ընել, եթէ նա յոգնած է. սեղանի վրայ դու կրնաս լաւ պատառը եղբօրդ կամ քրոջդ թողնել. դարձեալ դու կրնաս ուսանիլ, աշխատիլ, կարել, խոհանոցի գործով պարապիլ այն ժամերուն, որ աւելի պիտի սիրէիր խաղալ, որովհետեւ գիտես որ այսպէս ընելով հաճոյք կը պատճառես մօրդ: Դու պիտի տեսնես, փոքրիկ աղջիկ, թէ ի՞նչ ուրախութիւն պիտի զգաս սրտիդ մէջ, երբ քիչ մը անձնուէր լինիս. երբ նշմարես թէ

տաս տասերկու տարեկան լինիս, դու արդէն բարի և օգտակար էակ մ'ես: Այսպէսով դու պարտաւոր պիտի լինիս հոգածութեան մեծ գործեր ընել ապագային: Փնտռե՛ք եւ երջանկութիւնն ուրիշներու երջանկութեան մէջ. ահա ա՛յս է երջանկի լինելու միջոցը:

36. — Աղօթել

Տղա՛ք, աղօթքէ ետք, ձեր սիրտը աւելի թեթեւ և ձեր հոգին աւելի գոհ չէ՞ք զգար:

Աղօթքը կը թեթեւցնէ վիշտը եւ աւելի անխառն կը դարձնէ ուրախութիւնը. մէկին կը խառնէ չգիտեմ ի՞նչ զօրացուցիչ բան և միւսին երկնային բոյր մը:

Ի՞նչ կ'ընէք դուք երկրի վրայ եւ բան մը չունի՞ք խնդրելու Անորմէ, որ ձեզ հոն դրած է:

Երբ կենդանիները կը նեղուին, երբ կը վախճան կամ երբ անօթի են, աղիողորմ ձայներ կ'արձակեն: Այս աղաղակներն աղօթքներ են, որ Աստուծոյ կ'ուղղեն եւ Աստուած զայն կը լսէ: Արարածներուն մէջ մա՞րդը միայն պիտի լինի այն էակը, որ իր ձայնը երբէք չհասցնէ Արարչին ականջին:

Երբեմն դաշտին վրայն հով մը կ'անցնի, որ տունկերը կը չորցնէ եւ թարշամած թուլցած ցօղունները կը կախուին դէպի գետին, բայց խոնաւալով ցօղէն կը վերստանան իրենց թարմութիւնը և կը բարձրացնեն թարշամած ու թուլցած գլուխները:

Ահա այսպէս մեր հոգիները երբեմն կը թուլնան, կը թարշամին: Աղօթքը ցօղն է, որ կը քաւմացնէ ու կը կենդանացնէ:

ԼԱՄԸՆԷ

37. — Լաւագոյն աղօթք

Լսեցէ՛ք, տղաք, մէկը ձեզ կ'ըսէ թէ ի՞նչպէս պէտք է աղօթել, կեանքը ձեզ տրուած չէ շարունակ անգրաղ աղօթքի հոգեզմայլութեան մէջ միալու համար: Ձեզ կեանք տրուած է գործելու, բայց լաւ գործելու համար: « Աղօթք մը այն ատեն լաւագոյն է և սուրբ, երբ շատ ժամերու աշխատութեան սկիզբն է և վերջը: » Աշխատութեան արդելք չէ եւ օգտակար աշխատութեան տեղը չընեն, ուրեմն աղօթէ՛, երբ աշխատութիւնդ ու գործերդ վերջացած են կամ դեռ սկսած չես, բայց գործդ մի՛ ընդմիջեր, պարտականութիւնդ կիսատ մի՛ թողներ աղօթքի մէջ ընկղմելու համար: Բոլոր սրտով աշխատիր՝ դարձեալ աղօթել է: Դիտե՞ս թէ՛ ի՞նչ պիտի խնդրես Աստուծմէ աղօթքիդ մէջ:

Մինակ բան մը, միշտ մի և նոյնը եւ միակ կարեւորը : Դու անորմէ պիտի խնդրես շարունակ ամենալաւը լինիլ : Այսպէս քու աղօթքը գրեթէ պիտի չփոխուի, երբ մեծնաս, որովհետեւ հոգւոյդ խորէն պիտի գայ, երբ փոքր ես բոլորովին՝ տղայական պիտի լինի : Աղօթքը հոգւոյդ սովորութիւնը պիտի լինի և ոչ թէ շրջութունքներուդ : Սրտիդ պէտք մը, գործ մը պիտի լինի : Սիրէ՛ աղօթել՝ ինչպէս կը սիրես հայրդ :

38. — Աստուած

Տղա՛ք, կարդացէ՛ք հետեւեալ ոտանաւորը : Ան կը խօսի Աստուծոյ վրայ : Ձեզ կ'ըսէ թէ կայ Աստուած մը : Ձեզ կ'ըսէ նաեւ թէ մեր խղճին մէջ նա է որ կը խօսի : Ձեզ կ'ըսէ թէ արեւը, գիշերը, լուսաւորները, բնութիւնը, բոյսերը եւ կենդանիները, և նոյն խկ դուք իր ձեռագործներն էք, եւ ձեր հոգին իր գլուխ գործոցը երբէք պիտի չփոքսուի : Տղա՛ք, կարդացէ՛ք այս ոտանաւորը, սորվեցէ՛ք և մի՛ մոռնաք զայն :

Կեանք, ըսկիզբ եւ վախճան քո եւ աշխարհի ես դուն,
Որ ակնարկով մ'ընես անհունութիւնը րեզուն :
Ոգի տիեզերքի, Տէ՛ր, Հայր եւ Աւարիչ
Անուններով կը պաղատիմ քեզ, ո՛վ Ստեղծող : . . .
Երբ արբին, կէսօրին, ընթացքովն օդավար
Կը հեղու ջերմութիւն, կեանք, լոյս երկինքէն վար,
Իր շողերուն մէջ հօգօր՝ որ ինծի կեանք կուտան,
Քու շունչդ կ'զգամ ու լոյսըդ ճշմարտութեան :
Եւ երբ գիշերը Խափօրովն իր շողերուն
Նիրհած քնութեան նետէ մէին քօղ մ'երեւուն,
Ահմահութեան ծոցն ու խաւարին, առանձին,
Խոկալով վեհութեանը վրայ քաղցրիկ գիշերին,
Համակուած լըռութեամբ, անդորրութեամբ մը մէին
Հոգիս՝ յուզուած՝ պաշտէ էութիւնըդ բուկին :
Կ'զգամ, լոյս մը ներքին կ'ողողէ հոգիս ալ,
Կը լսեմ ծայն մը որ պատուիրէ ինձ յուսալ :

ԼԱՄԱՐԹԻՆ

39. — Ի՞նչպէս կը պաշտեն Աստուած

Մեր առ Աստուած ունեցած առաջին պարտականութիւնն է զինքը պաշտելը :

Պաշտելը յարգանքի ամենաբարձր աստիճանն է :

Մենք կ'արտայայտենք մեր պաշտումը առ Աստուած, իր անուան միացնելով մեր մտքի ըմբռնած մեծագոյն կարեւորութիւնը,

իր անունը երբեք թեթեւութեամբ պիտի չարտասանենք, արտաբերած ժամանակ պիտի զգուշանանք հասարակ կերպով արտասանելէ։ Աստուծոյ անունը տուած ժամանակ պէտք է զգոյշ լինիլ, ինչպէս և պատուոյ խօսքի համար։

Աստուած պաշտելու ամենալաւ եղանակն է, մեր բոլոր պարտականութիւնները ճշդիւ կատարել, որովհետեւ բարոյական օրէնքը նոյն իսկ Աստուծոյ օրէնքն է խղճի մտօք կառարուած։

Այն որ պատուաւոր կերպով կ'աշխատի, որ իր պարտականութիւնը խնամով կը կատարէ, նա հաճելի է Աստուծոյ, և Աստուած մեզմէ ուրիշ բան չի պահանջեր եթէ ոչ ըլլալ պատուաւոր և աղնիւ մարդ։

Վ Ե Ր Զ

ՀԱՄԱՌՕՏ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն 28րդ թիւէն)

Ճ Ա Շ Ա Կ

— Խօնչ է ձԱՇԱԿՅՔ։

— Ճաշակ կ'կոչենք ընդհանրապէս մտքին այն կարողութիւնը որ մեզ որոշել, ընտրել ու զգալ կուտայ բնութեան գեղեցկութիւնները և ինչ որ կայ գերազանց արուեստին գործերուն մէջ։

Իր այս անուանումը փոխ առնուած է Ֆիզիքական զգայաբանքէն որ կ'ըմբռնէ ինչ որ կայ գեղեցիկ եւ ինչ որ կայ տգեղ ան առարկաներուն մէջ զորս կը դիտենք։

Գրագիտութեան մէջ, ինչպէս և Արուեստից մէջ, ճաշակն(*)

(*) ճաշակը շատ աւելի յաճախ դատողութեան եւ որոշողութեան հոմանիշ է։ Այս կարողութեան ընտրանօք գործածութեամբն է որ կ'ունենանք բարեւոյճաւակը, եւ անոր չարաչար գործածումէն առաջ կուգայ գէշ, յոռի ճաշակը կամ քիւր ու քեփ ճաշակը։ ճաշակը փոփոխուած է պատճառաւ այն տարբեր դատաստաններուն՝ զոր կ'ընեն մարդիկ գեղեցիկին ու տգեղին վրայ, պատճառաւ այն այլանդակ ձեւերուն զորս ճաշակը կ'առնէ այլեւայլ ժողովրդոց մէջ, պատճառաւ այն փոփոխումներուն ու յեղաշրջումներուն, որք այլեւայլ ժամանակներու մէջ կ'կատարուին զրագիտութեան ինչպէս եւ արուեստներու մէջ։ ասոր համար անկարելի եղած է ընդհանուր եւ բացարձակ կանոններ հաստատել։ Սակայն այսու ամենայնիւ բաւական ընդհանուր կերպով կ'միաբանին գեղարուեստներուն մէջ ընդունիլ, իբրեւ կանոն՝ գեղեցիկ խոչալ մը, կամ գէթ, ճաշակի մասին, ամէն առարկայ կ'դատուի, կ'զննահատուի համեմատ այն օրինակին զոր ներկայացնել սահմանուած է, եւ համեմատ ամէն առարկայի իր ամբողջութեան հետ ունեցած մանրամասնութեանց ներդաշնակու-

է իմացական կարողութիւն գնահատելու եւ զգալու, դատելու եւ որոշելու գեղեցկութիւնները կամ թերութիւնները, իրենց ամենայնաթիւն ու ամենանըբին գծերուն կամ մանրամասնութեանց մէջ, որք կ'գտնուին մարդկային իմացականութեան գործերուն մէջ :

Ճաշակը զոր կարելի պիտի ըլլար սահմանել նաեւ պատշաճութեանց զգացումը, ինչպէս գերմանացի նշանաւոր փիլիսոփան,

Յեանս Այն ամէն բանի մէջ որ գեղարուեստներու կարգէն չէ, զարդերուն մէջ՝ օրինակի աղագաւ, եւ նորաձեւութեան ուրիշ առարկաներուն մէջ, ճաշակը բացարձակ է : Բնական բարւոք ճաշակն այնքան հազուադիւր որքան խանկազին յատկութիւն մ'է, բայց ճաշակը կ'ստացուի ու կ'բարգաւաճի մեծ օրինակներ սերտելով ու մեծ հանճարներուն հաղորդակցութեան մէջ : Ճաշակին գիտութիւնը գեղեցիկին ծանօթութեան վրայ հիմնուած՝ գեղեցկագիտութեան (esthétique) անուանուածն է : Ճաշակներուն եւ դատողութեանց տարբերութիւնները զորս կ'դնեն մարդիկ թէ իրական կամ բնական, թէ արուեստագիտական գեղեցիկին նկատմամբ, կ'բացատրուի ճիշտ միեւնոյն փաստերով ու պատճառներով որք կը ծառայեն ճշմարտութեան, արդարութեան եւ բարոյականութեան տարբերութիւններն ու հակասութիւնները հասկցնելու համար : ասով առանց այլայլել կարենալու բանին (իսկրին) եւ գիտակցութեան (բուն խիղճին) բացարձակ ու անկախ հանգամանքը : Ինչպէս ըսուեցաւ, ճաշակը մարդկային մտքին բոլոր կարողութեանց նման ենթակայ է դաստիարակութեան ու մշակութեան. կ'զարգանայ ան, կը փոփոխի, կ'կատարելագործի, եւ կ'ապականի կամ կ'եղծանի : Կայ ճաշակ մը ողջախոհ եւ ճաշակ մը բղջխոհ : Ոչ ոք կրնայ ուրանալ թէ վատնար դաստիարակութիւն մը. մոլի ու մոլար սովորութիւններ, արտառոց ու վտրնոց գաղափարներու զուգորդութիւններ, կարգ մը մարդոց կուտան ճաշակ մը որ հանոյք կ'զգայ բոլոր կոշտ ու կոպիտ բաներէն, եղծ ու գեղծ արարքներէն. Կենցաղավարութիւնը, երեւակայութիւնը, խառնուածքը, կլիման, ապրելավայրը, ընկերական կազմակերպութիւնը կամ պայմանները, բարքերը, կրթական ու կրօնական գաղափարները կ'ներգործեն մեծագոյն ազդեցութիւնն ազգերուն ու անհատներուն ճաշակին վրայ : Այս պատճառներուն հետազոտութիւնը զբաղիտութեան ինչպէս եւ գեղարուեստներուն պատմութեան կարեւորագոյն մասերէն մին է :

Ճաշակագիտութեան վրայ աւելի ընդարձակ տեղեկութիւններ քաղելու համար հետալից ու ճոխ զանձարաններ են, Վոլթէրի փիլիսոփայական Բառարանին ՃԱՇԱԿ վերնագրով յօդուածը : Մօնղէսքիէօի փորձեր Ճաշակի վրայ գրուածքը : Herderի Պատճառներ Ճաշակի անկումին, ապակաճումին զանազան ժողովուրդներու մէջ՝ զիրքը : Ռոլէնի Ճաշակի վրայ հատուածը : Cartaud de la Villateի Պատմական ու փիլիսոփայական փորձեր Ճաշակի վրայ հեղինակութիւնը : Humeի of the Standard of taste, and of the Delicacy of taste : Cooperի Ճաշակի վրայ գործը : Alisonի փորձեր Ճաշակին Բնութեան եւ Սկզբունքներուն վրայ երկը : Winkelmannի Կարողութիւն զգալու Գեղեցիկը Արուեստներուն մէջ մատենը (Գերմաներէն) : Th. Reidի Ըրդ ֓որձ Մարդուն իմացական Կարողութեանց վրայ ճառածը (Անգլիերէն) : Lacourne՝ de Ste-Palaysի Նամակներ Ճաշակին վրայ Արուեստներու մէջ ուսումնասիրութիւնները : H. Blairի Գեղեցիկ Դպրութեանց Ընթացքներ : Gérardի ֓որձ Ճաշակի վրայ իմաստասիրութիւնը : Siran de la Tourի Ճաշակի մասին զգալու ու

Քանզ ճաշակի հանճարեղ վերլուծման մէջ հասարակաց զգայա-
րանքը, կամ ինչպէս ոմանք գեղեցիկին զգայարանքը կամ գործիքը
կոչած են. սակայն այս անուանակոչումներն ամէնքն ալ աւելի
տեսակ մը փոխաբերութիւններ են քան ճիշտ սահմաններ : Ասոր
ալ պատճառը սա է թէ ճաշակը՝ հաճելի տպաւորութեամբ մը
զգալի կ'ընէ մեզ ինչ որ մեզ ըմբռնել ու գնահատել կուտայ :

Գրագիտական ճաշակը վառվռուն, մեկին, բացերեւ ու հա-
կիրճ որոշողութիւն մը, ընտրողութիւն մ'է զոր կ'ընէ ի վեր հա-
նելու համար գեղեցկութիւնը, ճշտութիւնն ու ճշմարտութիւնն
այն բացատրութեանց ու մտածմանց որք կ'մտնեն հսուին կամ
խօսքին մէջ : Բնական կարողութիւն մ'է այս, ուսմամբ կատա-
րելագործուած, որ կ'առաջնորդէ մտքին, կ'կանոնաւորէ երեւա-
կայութիւնը, որ մեզի կը թելադրէ սակաւապէտ կերպով եւ ընտ-
րութեամբ կատարել խօսքին շնորհքներն ու զարդարանքները,
և մեզ կ'պահէ միշտ բնականին ու ճշմարտին սահմաններուն մէջ :

— Ճաշակն ամէն մարդու հասարակ կարողութիւն մ'է :

— Ճաշակին սկզբունքները մարդկային մաքէն անզատչելի
են : Զիկայ մէկը որ չ'զգայ ինչ որ գեղեցիկ, ճշմարիտ ու բնու-
թեան պատշաճաւոր է : Զիկայ բան մ'աւելի ընդհանուր քան այն
հաճոյք որ կ'ըզխի այն ամենէն որ մեծ, ներդաշնակաւոր կամ
նոր է : Ամենէն աւելի ապուշ մարդն իսկ կ'այտնէ թէ անզգայ
չէ հանդէպ բոլոր այն վեհաշուք բաներուն ու տեսիլներուն կամ
երեւութիւններուն որք երկրին վրայ և երկինքին մէջ ի տես կու-
գան, ինչպէս նուազ վարժ ու նուազ գիտուն ականջը կ'խորտչի
այն անհամաձայնութիւններէն ու խժալուր հնչումներէն որք
կ'պատահին նուազահանդէսի մը մէջ : Բայց ամէնքն ալ չունին
սոյն կարողութիւնը միեւնոյն աստիճանով, վասնզի բնութիւնն իր
պարգեւները չի բաշխեր ամէն մարդու՝ հաւասար համեմատու-
թեամբ. անկախաբար այն տարբերութենէն՝ զոր ճաշակին վրայ
կ'ներգործեն դաստիարակութիւնը, ընթերցումները, օրինակ-
ներն և դարուն նախապաշարումները, որք կ'կատարելագործեն
կամ կ'ապականեն ճաշակին սերմունքը զոր բնութիւնը սփռած է
բոլոր մարդոց սիրտին մէջ :

դասէլու Արուեսք անունով աշխատասիրութիւնը : Signorelliի Del Gusto et
Del Bello մատենագրութիւնը, եւայլն :

Դարավերջիկ կամ դարասկզբիկ զրագէտներուն կողմանէ ճաշակի վրայ
բոլոր զրուածները — զրուելիքներն ալ — իրենց մեծահանճար նախորդաց
զրուածներուն կամ ամփոփումը կամ ընդլայնումն են ու պիտի ըլլան, թէ եւ
մտքին աշխարհագրութիւնը միշտ ունենայ դեռ գտնուելիք աշխարհներ եւ ա-
նոր հողը դեռ թաքուն պահած շատ մը շահագործելի հանքեր :

— Ո՞րք են կատարելագործեալ ճաշակին նկարագիրները կամ հանգամանքները:

— Գլխաւորապէս երկուք են. փափկութիւնն ու մաքրութիւնը:

Ճաշակին փափկութիւնը կ'կայանայ գլխաւորապէս զգայնութեան կատարելութեանը մէջ, որ անոր հիմն է: Փափուկ ճաշակի տէր անձեր ոչ միմիայն սաստիկ կերպով կ'զգան ամենէ աւելի բացայայտ գիծերը, այլ եւ կ'ըմբռնեն ամենամանր գոյները. նուազ երեւուն գեղեցկութիւնները չեն վրիպիր անոնց ուշադրութենէն, ոչ ալ ամենաթեթեւ թերութիւնները:

Ճաշակին մաքրութիւնը կախումն ունի այն կապակցութենէն զոր խելքն ու դատողութիւնն ունին գլխաւորապէս ճաշակին կարողութեան հետ: Մաքուր ճաշակի տէր մէկը չի ջլանար կեղծ ու պատիր գեղեցկութիւններէն. կ'գնահատէ ճշդութեամբ, կ'համեմատէ արդարութեամբ, կ'որոշէ, կ'մեկնէ կարճառոտօրէն այլեւայլ սեռի գեղեցկութիւնները:

— Ի՞նչ տարբերութիւն կայ ճաշակին եւ հանճարին մէջ,

— Ճաշակը դատելու կարողութիւնն, հանճարը արտադրելու կարողութիւնը, մարդ մը կրնայ ունենալ ճաշակ ու եւ է բանի համար որ կ'վերաբերի բանաստեղծութեան, պերճախօսութեան, գեղեցիկ արուեստներու, և սւնենալ քիչ կամ բնաւ հանճար այս զանազան սեռերուն մէջ գործ մը յօրինելու. Հանճարը կ'ստեղծէ, կ'հնարէ, ճաշակը կ'զգայ, կ'ընտրէ:

ԳՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՎՐԱՅ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

— Ի՞նչ կ'հասկցուի ԳՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԻՆ պատուէրները ըսելով:

— Հետեւելի կանոններու հաւաքածոյ մը, գրագէտն իր շարադրութեանց կամ երկասիրութեանց մէջ առաջնորդելու կարող:

— Ի՞նչպէս ծագումն առած են պատուէրները:

— Պատուէրները մարդուս շարադրել գիտնալէն և խօսքին տաղանդը ճանչնալէն առաջ երեւակայուած օրէնքներ չեն:

Օրինակներէն առաջ յօրինուած կանոններ չեն: Եսքիղէս, Սոփոկղէս եւ Եւրիպիղէս իրենց սքանչելի գլուխ-գործոցները կ'արտադրէին՝ դեռ Արիստոտէլ ողբերգութեան կանոնները չի գծած: Հոմերոս շատ ժամանակ առաջ վսեմ հանդիսացած է, դեռ Լոնկինոս վսեմը չի սահմանած: Կային պերճախօսներ, բանաստ-

տեղծներ երբ տակաւին գեղեցիկ դպրութեանց մասին ո եւ է ուսում կամ դասաւանդութիւն եղած չէր :

Անոնք որ իրենց մտածումներն եւ իրենց զգացումները յայտնեցին աւելի ճշգրտութեամբ ու ազդուութեամբ գրաւելով իրենց յանկուցին ուրիշներ, և հաճոյքով իրենց խօսքին զմայլող ունկնդիրներ ունեցան : Անոնց յաջողութեան հաւաստի վկաներ են այն մարդեր որք սկսան անոնց խօսածներն ու գրածները դիտողութեան առնել և զանոնք սերտել , ուսումնասիրել :

Ընտրանօք գրի առնուած , հաւաքուած ու կարգի դրուելով հրատարակուած սոյն կանոնական դիտողութիւններն ու նկատողութիւնները լուսարար ու դիւրատար առաջնորդներ եղան , որով հասունցան ընդ շուտ նոր ճարտասաններ , նոր բանաստեղծներ , նոր գրագէտներ , նոր մատենագիրներ որք , իրենց բնական տաղանդները միացնելով այս դիտողութեանց ուսումին , իրենց նախորդներէն շատ աւելի յաջողեցան , և հայթայթեցին իրենք իսկ նորանոր խորհրդածութեանց առատ պաշար մը , եւ այսպէս շարունակուեցաւ դարէ դար մինչեւ մարդկային հանճարը կատարելագործեց պերճախօսութիւնը , բանաստեղծութիւնն և մատենագրելուն արուեստը : Այս կերպով կազմուած , խմբուած է գրելու արհեստին պատուէրներու հաւաքածոն . հետեւաբար պատուէրները մարդկային սիրտին բնութեան վրայ հիմնուած , անփոփոխ ու քմահաճոյքէ անկախ են :

— Կանոններուն ուսումն անհրաժեշտ է :

— Այս ուսումն անհրաժեշտ կարեւորութիւն ունի : Կանոնները մտքին կ'օգնեն ենթական կամ նիւթն ընտրելուն մէջ . հանճարին կ'օժանդակեն ծրագիրն ստեղծելուն մէջ . կ'վարեն ճաշակը զարդարանքները բաշխելուն մէջ : Հեղինակն որ կ'շարադրէ և քննադատն որ կը դատէ պարտին ուրեմն զանոնք ճանաչել . մին արտադրելու համար լաւ գործեր , միւսը զանոնք լաւ գնահատելու համար :

— Ի՞նչպէս կը բաժնուին կանոնները :

— Կ'բաժնուին հիմնական ընդհանուր կանոններու՝ որք յատուկ են ամէն գրական արտադրութեանց և մասնաւոր կանոններու , որք կ'վերաբերին երկասիրութեանց իւրաքանչիւր տեսակին սեպհական :

Հիմնական կանոններն են : Ա . ձեմարտութիւնը : Կ'կայանայ ան ճիշտ ու ճշգրիտ կերպով առարկաները ներկայացնելուն մէջ , ըլլան անոնք իրական , կամ ճշմարտանման , կամ հնարաւոր :

Բ . ձգրտութիւնը : Կը բովանդակէ կամ կ'ընդգրկէ նիւթն իր

բոլոր տարածութեան մէջ առանց անկէ անդին անցնելու . կ'զտէ , կ'զատէ ամէն ինչ որ նիւթէն օտարոտի է , առանց յապաւելու , դուրս ձգելու ու է բան որ անոր էապէս յատուկ է :

Գ. Յստակութիւնը : Առանց ճիգի ըմբռնել կուտայ խօսքով բացատրուած մտածումը :

Դ. Վայելչազարդութիւնը կ'կայանայ ոճին ճոխութիւններն և ուրիշ զանազան զարդարանքները ընտրանօք գործածելուն մէջ :

Ե. Կարգը : Կ'կայանայ խօսքին ամբողջութիւնը կազմելիք մասերը լաւագոյն յօրինուածքով մը կարգի դնելուն մէջ :

Զ. Միութիւնը : Կ'կայանայ կազմելու մէջ միակ ամբողջ մը այն մասերէն որք , հակառակ իրենց զանազանութեան և իրենց բազմապատկութեան , երթան յանգին ուղղակի կերպով և անզգալարար հասարակ վախճանի մը :

Է. Օգտակարութիւնը : Կ'կայանայ մեր պէտքերուն և մեր երջանկութեան համար փրկարար հրահանգներուն ու վարժութեանց մէջ :

Ը. Պարկեցութիւնը : Կ'կայանայ կրօնքին եւ առաքինութեան նկատմամբ տածելիք յարգանքին մէջ . յարգանք զոր բնութեան հեղինակը քանդակած է մեր հոգւոյն մէջ անջնջելի տառերով :

Պիտի նշանակենք մէն մի տեսակ գործի յատուկ մասնաւոր կանոնները գրական շարադրութեանց իւրաքանչիւր սեռին վրայ խօսած ատեն :

— Ո՞րք են այն առարկաներ որոց կը վերաբերին գրելու արուեստին պատուէրները :

— Այս առարկաներ գլխաւորապէս երկուք են , մտածումներն ու ոճն , որոց կ'վերաբերին այս պատուէրներ , եւ որոց վրայ կ'խօսին երկու յաջորդ գլուխները :

(Շարունակելի)

ԱՐՄԷՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝ ԳԱԻԱՌԻՆ ՄԷՋ

(ՌԻՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

Գալով իրենց անհատական կեանքին , միեւնոյն պակասն աչքի կը զարնէ , տխուր հետեւանքներու ճիւղաւորումովը ցանցուած : Նիւթապէս գեղջուկին գերազանցօրէն գեղեցիկ զիւրութիւններ ունենալով հանդերձ , անոնցմէ ո՛չ նուազ անտեղեակ են գիտութեան տարրական օրէնքներուն մասին , և իրենց տգիտութեան անոնցինէն շատ աւելի սուղի կը նստի , անոր համար որ՝ քաղքենի միջավայրին ու բարքերուն հակաբնական հանգամանքները՝

կրկնապէս կ'ազդեն ֆիզիքականին ու բարոյականին։ Բագոսի և խաղամոլութեան նուիրումը գիշերային վատառողջ տքնութիւններէն սկսելով դեռ երեւակայութիւնք մինչեւ ամէնէն աններելի զեղխութիւններն՝ այս դասակարգին ուժերը կը ջլատեն, մինչ զուարճութեան այս գոհակ ըմբռնումը, քայքայիչ արդիւնքին հակառակող օր ըստ օրէական նուիրագործում մը կը ստանայ։ Ժամանակի ու կորովի ո՛րքան անմտած վատնումներ, զորս պարբերական թեթեւ ինքնաշխատութիւններու վերածելով հրաշքով ձեռք բերել կարելի պիտի ըլլար, ի նպաստ մտաւորական պահանջումներուն։

Ու միայն ա՛յսպիսի չէ։ Իրենց բնակարանները, հագուստները սննդատութիւնը և այլն մօտէ՛ք, քննող մը պիտի համոզուէր թէ ամենօրեայ ապրուստին շարունակական ընդլայնում մըն է ողջահիկ ամէնէն պարզ կանոններուն իսկ դէ՛մ։ Տգիտութենէ ծնունդ առնող ծուռ ըմբռնումներ, հիմնովին չըլած են բնականին ուղղութիւնը կեանքերնուն, որ ֆիզիքականին մշտապէս այլաստութեամբ և անկումէն անմիջապէս ազդուած, աղտոտ բարքերով կ'աղարտուի և առողջ տրամադրութիւններու անատակ՝ անաւիւն և անարիւն ապրուածքի մը ակամայ դերակատարները կը դարձնէ զիրենք։

Կենսական վայելքներու մասին անհոգ, անտարբեր ըլլալնին չէ՛ ասոնց պատճառը։ Ընդհակառակը, ոչինչ կը խնայեն՝ հաճոյք մը աւելի ըմբոշխնելու համար և ոսկին չէ՛ որ կը պակսի շատերուն, ծիածանի ծփծփուն ծածանումի մը վերածելու համար կեանքի բոլոր դրուագները։ Ասով հանդերձ, ամէն դասակարգի անձերէ աւելի, իրենք են տուժողները։ Եւ ինչո՞ւ։ — Որովհետեւ բոլոր այդ ջանքերը, բոլոր այդ կենսատենջիկ զոհողութիւնները՝ հակառակ արդիւնքներու կը յանգին, անգիտակից առատութեամբ վատնուած ըլլալով։ Չափազանցութիւնները, որոնց անձնատուր կ'ըլլան, զուարճութեանց յորդառատ պոռթկում մը դարձնելով ապրուստին ամբողջ, ու վայելքի բաժակը անյագօրէն քամելու, ծծելու բուռն մարմաջնին՝ խորունկ տգիտութիւն մը կը մատենն, բացատրելով ամէնուն ծանօթ սա՛ հակադիր իրողութիւնը՝ որով միշտ տեսնուած է թէ՛ իրենք են ամէնէն նուազ երկարակեացները և ամէնէն աւելի ենթակայ ֆիզիքականին սպառնացող բազմադիմի վտանգներու։ Որոնցմով կեանքը ոսկեզօծ տառապանք մը կը դառնայ միայն։ Ամէն ոք ասոր ապացոյցները կրնայ տեսնել իր շուրջ, ուստի կ'անցնիմ ուրիշ կէտերու։

Երջանկութիւնն իր յարակից արդիւնքներով, փայլուն մետա-

ղին գերին չի՝ կրնար ըլլալ, երբ չափաւորութիւնը կը մոռցուի, և գիտական օրէնքները կ'անտեսուին: Շքեղ ապարանքի մը փառալից փարթամութիւն ի'նչ չա՛հ բնակողներուն. երբ ան կառուցուած չէ առողջապահիկ յատակագծի մը համաձայն, և օդի ու լոյսի կենսունակ շնորհներէն զրկուած կը մնան ներսինները, թէև թաղուած՝ տանթէլներու և թաւիշներու քնքռութեանց մէջ, որոնք իրենց կարգին զուրկ կ'ըլլան շատ հեղ առողջութեան ամէնէն տարրական պայմանէն, — Մաքրութենէն: Այդ դրախտային վայրերուն մէջ, օդը՝ ո՛րքան հեղցուցիչ, արեւուն լոյսը՝ ո՛րքան տաքն ու դէմքերն ալ՝ բնականօրէն՝ ո՛րքան դժգոյն կ'ըլլան: Ոսկեճամուկ հագուստներու ջլացուցիչ զարդարանքներուն մէջ, ազագուն ֆիզիքականի մը հիւժումը բոյն կը դնէ շատ հեղ, որովհետեւ այդ հագուստները, այդ քօրսէները և կամարները՝ հակառակ այնքան թանկագին ու մեծածախս ըլլալուն, իրենց տէրերէն կը խլին բան մը որ ամէնէն աւելի անգին է, — առողջութիւնը: Լուկուլեան սեղաններ անպակաս են այդ յարկերուն տակ, համադամները զիրար կը գերազանցեն ամէն կերպով. բայց ի'նչ օգուտ, երբ ո՛չ մէկ անգամ անոնց չուրջ ճաշողներու զուարթ շարք մը կը կազմուի. մէկը սրահին անկիւնը քաշուած է. պատահական անհանգստութենէն ստիպուած, ուրիշ մը չի կրնար ճաշին մասնակցիլ, նմանօրինակ պատճառով մը, և անոնք ալ որ կը միանան սեղանին չորս բոլորը, հազիւ ամէն մէկէն երկու պատահաւ կրնան ճաշակել:

Վերջապէս ամէն կերպով, և ամէն պարագայի մէջ, նիւթական ճոխութենէ սպասուած վայելքն անծանօթ մնացած է մեր դրամատէրերուն ու վաճառականներուն:

Ինչպէս որ չեն գիտեր, չեն խորհիր ընդարձակ ու ծրագրուած հաստատուն գործառնութիւններով դրամական մնայուն ասպարէզ մը ընտրել և հետեւաբար բաղդին քմահաճոյքները կը շահագործեն, այնպէս ալ այդ ձեռք բերուած նիւթական դիւրութիւնները՝ չեն կրնար գործածել իրենց բարօրութեան:

Ասիկա այնչափ սովորական և այնչափ ընդհանուր է գաւառի հայ հարուստներուն նկատմամբ, որ ժողովուրդի միտքը նախապաշարում մըն ալ ասոր բաժին հանած է: Ամէն ոք կը կարծէ թէ՝ հարուստներն անպատճառ թշուառ կ'ըլլան, պաշարուած ծանրածանր հոգերով ու նուրբ ապրուածքի մը սրտմաշուքներովը սեղմուած:

Պատճառներ ու երեւոյթներ կան թէև այդպէս կարծել տալու, բայց ո՛րքան ցաւալի է բուն իրողութիւնը:

Տգիտութի'ւնը, մտաւորական խոպանութիւնն է ան:

Ընդհակառակը, հարստութիւնը, նիւթական դիւրութիւններն այնպիսի առաւելութիւններ են՝ որոնցմով մարդ կեանքին ամէնէն ազնիւը և ամէնէն գեղեցիկը կրնայ ապրիլ, պայմանով որ զանոնք գործածել գիտնայ: Օրինակ ձեզի՝ սա օտար միսիօնարները, որոնք կուգան մեր կլիմային, մեր բարքերուն ու մեր լեզուին կը յարմարին այնքան շուտով, կ'օգտուին մեր երկրին բերքերու անհամեմատ առատութենէն և փայլուն ու երջանիկ կեանք մը կը ցուցադրեն իրենցմէ շատ աւելի փարթամ բնիկ հարուստներուն հանդէպ: Քննեցէք իրենց հագուստը, սնունդը և բնակարանն էր կ'պրին, մօտէն ծանօթացէք իրենց առօրեայ ապրուածքին և պիտի գտնէք գաղտնիքը, որով անոնք միշտ հանգիստ, միշտ ժպտուն առոյգ և աշխոյժ կ'երեւան մեզի:

Մերինները, սակայն, ինչպէս կրնան այդ հանգստութիւնը վայելել, երբ առտնին տնտեսութեան այբուբէնն իսկ անծանօթ է որքան արական նոյնքան իգական սեռին: Իգական սեռը մանաւանդ, բոլորովին ձախլիկ դեր մը ունեցած է, այս մասին, գիւղաբնական գեղջկուհիէն սկսելով մինչեւ քաղաքի նրբացեալ բարքերովը մաշող տիկիները և օրիորդները, որոնք պէրանքին մէջ կը փնտռեն կեանքի փառքը, միեւնոյն ատեն բնականին բոլոր պայմաններուն հետ գիտակից խնայողութեան գաղափարէն բոլորովին հեռու մնալով: Կամ սոսկալի կծծիներ կ'ըլլան անոնք, կամ մէյմէկ անխորհուրդ շռայլ: Երկու ծայրայեկութիւններ, որոնք հաւասարապէս փնասակար են: Որովհետեւ պարագայ կայ՝ ուր կոյր կծծիութիւնը շռայլութեան չափ փնասակար ծախքերու դուռ կը բանայ: Եւ սակայն, այս տեսակի տներով, գաւառացի կիներ միջին ճամբայ չունի և ամէն պարագայի մէջ այրէն գերազանց տգիտութեան մը աղէտները կը լծորդէ անոր սխալ կենցաղավարութեան ու գործառնութեան:

Ու ինչպէս կարենան ունենալ պահանջուած ու բաղձալի առողջութիւնը, աշխուժութիւնը, երբ նոյնքան անգիտակից իրենց կազմուածքի տրամադրութեանց և տիեզերական կանոններուն ամէնէն տարրականին որուն ենթարկուած են իրենք: Նիւթական աննկատ յղփացումն ինչ կարծէ, երբ մտքին օժանդակութիւնը չէ անոր ուղղիչը, ձանձրոյթէն, բորբոսած նախապաշարումներէն, հոգեկան վատթարացումէն ինչպէս գերծ միայ հարուստը, քանի որ գեթ ազնիւ ընթերցումներէ ներշնչուած կազդուրիչ զբաղումներով չի բարեխառնէր պարագայ ժամերը: Եւ վերջապէս մաքուր, կենսունակ ապրուածքն ինչ գործ ունի այն ապարանքներուն խորը, ուր իրիկունը ածուխի կոյտեր կը թաղեն կրակարանին մէջ, առաւօտուն պատրաստ կրակ ունենալու մըտքով...

Շարունակելի

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ

ՊԶՏԻՊ ՔԼՕ, ՄԵՄ ՔԼՕ

(Շարունակութիւն 28րդ քիւէն)

Փոքրիկ Քլօ ականջը տոպրակին մօտեցուց՝ իբր թէ մօտիկ ընէր զայն։

«Ի՞նչ կ'ըսէ կոր։

— Կ'ըսէ որ, եթէ ուզէք բանալ սա խոշոր սնտուկը, հոն



անկիւնը, պիտի տեսնաք սոստանան. բայց պէտք է ուժով բռնել կափարիչն, որպէս զի չփախչի։

— Օգնեցէ՛ք ինծի որ բռնեմ, ըստ գեղացին՝ սնտուկին մօտենալով, ուր կինը պահած էր ճշմարիտ երգիչն որ վախէն կը դողդղար։

Կափարիչը բացուեցաւ։

— Վա՛յ, գոչեց շինականը՝ դէպի ետեւ ոստում՝ մը ընելով, տեսա՛յ, տեսա՛յ, կատարելապէս մեր եկեղեցիին երգիչին կը նմանի. սոսկալի՛ է։

Յետոյ սկսան կոնծել :

— Ինծի՛ ծախէ քու վհուկդ, ըսաւ գեղջուկը, ի՛նչ ալ ուզես պիտի տամ, դրամով լեփլեցուն գրուան մը, եթէ կ'ուզես :

— Չե՛մ կրնար, ըսաւ Պզտիկ Քլօ : Մէյ մը մտածէ՛ թէ անիկա ինծի որքա՛ն օգտակար է :

— Եւ սակայն ինծի շա՛տ երջանիկ պիտի ընես, ըսաւ գեղջուկը՝ թախանձելով :

— Շա՛տ աղէկ, ըսաւ վերջապէս Պզտիկ Քլօ. քանի որ զիս հիւրընկալեցիր, պիտի զիջանիմ ձեզի ծախել զայն՝ դրամով լեցուն գրուանի մը փոխարէն, բայց քիչ մը ինսալանա լեցուր :

— Դու գոհ պիտի ըլլաս. միայն, քենէ պիտի խնդրէի որ սա սնտուկը տանէիր. չեմ ուզեր որ տունին մէջ ժամ մըն ալ մնայ : Գուցէ սատանան միշտ հոն է :

Ասոր վրայ, Պզտիկ Քլօ անոր տուաւ իր տոպրակը չոր կաշիով մէկտեղ, որուն փոխարէն ընդունեցաւ դրամով ակաղձուն գրուան մը, ու ձեռնասայլ մը դրամներն ու սնտուկը տանելու համար :

«Մնա՛ք բարով» ըսաւ, ու հեռացաւ :

Անտառին միւս կողմէն, նորգնոր կամուրջի մը վրայ կեցաւ, — որ կը ծառայէր խորունկ գետէ մը անցնելու, — ու ըսաւ ըստ ըստ. « Ի՞նչ պիտի ընեմ աս անսլիտան սնտուկը. անա՛նկ ծանր է որ կարծես մէջը քարերով լիք է : Արդէն յոգնեցայ ես ալ գլխորցնելէ, աւելի աղէկ է որ գետը նետեմ, եթէ ջուրը տունս տանի զայն. աւելի աղէկ է, ապա թէ ոչ՝ կ'անցնիմ կ'երթամ : Յետոյ մէկ ձեռքով վերցունց սնտուկը, իբր թէ ուզէր ջուրը նետել :

— Կեցի՛ր, կեցի՛ր, պօռաց երգիչը սնտուկին մէջէն, նախ թող գիտ որ ելլամ :

— Ա՛յ, աղաղակեց պզտիկ Քլօ, ահաբեկիլ կեղծելով, սատանան հոն է դեռ. պէտք է որ ատեն չկորսնցուցած խեղդեմ :

— Չէ՛, չէ՛, գոչեց ձայնաւորը, խնայէ՛ ինծի, ու քեզի պիտի տամ գրուան մը դրամ :

— Աս ալ ուրիշ շահ մըն է, ըսաւ պզտիկ Քլօ՝ սնտուկը բանալով :

Ձայնաւորը դուրս ելաւ, պարապ սնտուկը ջուրին մէջ հրեց, ու իր տունը վերադարձաւ պզտիկ Քլօին տալու համար իր դրամին գրուանը : Քլօ՝ ասանկով՝ ձեռնասայլը լեցնելիք բան մը ունեցաւ : Երբ իր տունը մտաւ. ամբողջ դրամները սենեակին մէջ պարպեց : « Զիտ կաշի մը ահա այսչափ շահաւէտ եղաւ ինծի, » բացաբանչեց : Մեծ Քլօ զայրոյթէն պիտի մեռնի եթէ իմանայ

թէ իմ մէկհատիկ ձիուս երեսէն այսքան հարստացայ » :

Յետոյ տղայ մը զրկեց մեծ Բլօի տունը, անկէ պարապ գրը ուան մը փոխ ուզելու համար :

— Ի՞նչ պիտի ընէ արդեօք, մտածեց մեծ Բլօ : Ու յատակը խայծղանով ծեփեց, որպէս զի կարենայ անոր բան մը փակցնել : Երբոր գրուանը անոր վերադարձուց, մեծ Բլօ մէջը երեք հատ մէկ զրուշնոց փակած գտաւ :

— Հէ՞, գոչեց, ո՛ւրկէ առեր է սատանան աս ամէնքը :

Ու անմիջապէս պզտիկ Բլօի տունը վազեց :

— Ո՛ւրկէ ձեռք անցուցիր աս դրամը :

— Իմ ձիուս մորթը հայթայթեց, զոր երեկ ծախեցի :

— Աղէ՛կ վաստկեր ես, ըսաւ մեծ Բլօ : Յետոյ, չուտով մը իր տունը դարձաւ, առաւ կացին մը, զարկաւ տապալեց իր չորս ձիերը, մորթազերծեց ու անոնց կաշին քաղաք տարաւ : « Կաշի-նե՛ր, կաշի-նե՛ր կը ծախեմ, ո՛վ կ'ուզէ կաշիներ գնել », ազա-ղակեց փողոցներուն մէջ : Բոլոր կօշկակարներն ու կաշեգործները վազեցին գինը հասկնալու համար :

— Ամէն մէկուն համար գրուան մը դրամ, պատասխանեց մեծ Բլօ :

— Խե՞նդ ես, ի՛նչ ես, կը կարծե՞ս որ գրուաններով դրամ ունենաք :

— Կաշի-նե՛ր, կաշի-նե՛ր, շարունակեց ան, ո՛վ կ'ուզէ կաշի-ներ գնել :

Ու եթէ մէկը սակարկեր. « Իւրաքանչիւրին գրուան մը դրամ », կը պատասխանէր միշտ :

— Մեզի կը ծաղրէ կոր : Գոռաց վերջապէս ամբօխը : Յետոյ կօշկակարները և կաշեգործները առին իրենց փոկերը, ու սկսան սաստկապէս ծեծել մեծ Բլօն :

Ու մեծ Բլօ հազիւ հազ կրցաւ ինքզինքը ազատել հարուած-ներու տակէն ու քաղաքէն փախչելով դուրս ելլել :

— Պիտի հասկցնե՞մ իրեն, ըսաւ զայրազին՝ տուն մտած ա-տեն. աս ամէնուն պատճառը պզտիկ Բլօն է : Պիտի մեռցնեմ զինքը :

Ու սակայն պզտիկ Բլօի ստնտուն մեռած էր, ու թէպէտ չատ չար կին մը եղած էր իրեն նկատմամբ՝ լացաւ անոր վրայ : Դիակը ծածկեց իր անկողինին մէջ, տեսնելու համար թէ պիտի չկրնա՞ր զայն կեանքի բերել, ու գիշերն ի բուն աթոռի մը վրայ մնաց :

Կէս գիշերուն, դուռը բացուեցաւ, ու մեծ Բլօ կացինը ձեռքը ներս մտաւ : Գիտնալով թէ ուր գետեղուած էր փոքրիկ

Քլօի անկողինը, անոր մօտեցաւ յուշիկ, սաստիկ հարուած մը տուաւ մեռած ստնտուին ճակտին:

— Հիմա ալ ինծի պիտի չկրնաս խաբել, ըսաւ հեռանալով, վասն զի կը կարծէր սպաննած ըլլալ իր թշնամին:

— Ի՞նչ ապերախտ մարդ, գոչեց պզտիկ Քլօ, իս մեռցնել կ'ուզէր: Բարեբախտաբար պառաւ ստնտուս էր հոն, որ արդէն մեռած է: Ետքը պառաւին կիրակնօրեայ հագուստները հագցուց իր դրացիէն ձի մը փոխ առաւ ու իր կառքին լծեց: Ետեւի նըստատեղիին վրայ դրաւ զանիկա անանկ որ չիյնայ, ու անտառէն անցաւ այսպէս: Պանդուկ մը հասնելուն, պզտիկ Քլօ կանգ առաւ՝ ուտելիք մը հարցնելու համար:

Պանդուկապետը ընչեզ մարդ մըն էր, սատանային չարքիս հագցնող, բայց պղպեղի ուլիս կծու, և գոյրացկոտ ալ:

— Բարի լոյս, ըսաւ պանդուկապետը, կիրակնօրուան լաթե՞րդ հագեր ես:

— Այո՛, ըսաւ Քլօ կառքէն իջնելով, պառաւ ստնտուս քաղաք տանիլ կ'ուզեմ: Մեղրաջուր մը տար իրեն զովանալու համար ու բարձրաձայն խօսէ հետը, ինչու որ չի լսել գրեթէ:

— Շատ աղէկ, կ'ընեմ, ըսաւ պանդուկապետը:

Ու գնաց գաւաթ մը մեղրաջուր լեցնել, զոր բերաւ կառքին մէջի պառաւին:

— Ա՛ռ նայինք սա գաւաթ մը մեղրաջուրը, պօռաց մեռած կնիկան. այլ ան տեղէն իսկ չչարժեցաւ: Չէ՞ք լսեր կոր աղաղակեց իր ամբողջ ուժովը. առ սա մեղրաջուրը:

Կոկորդը պատուելու չափ պօռացեր էր ու պառաւը դեռ չէր շարժած: Ան ատեն, մոլեգին, գաւաթը անա՛նկ ուժգնօրէն նետեց կնիկան երեսին որ կռնակի վրայ ինկաւ կառքին մէջ, չունենալով որ եւ է կռուան մը հաստատուելիք: Այս վայրկեանին պզտիկ Քլօ վրայ ըսաւ:

— Թշուառակա՛ն, պօռաց՝ պանդուկապետին կուրծքէն բռնելով, մեռցուցեր ես ստնտուս, նայէ սա ծակը զոր ճակտին վրայ բացեր ես:

(Շար.)

Թրգմ. Վ. ԳԱՐԱԴԱՇԵԱՆ

ԱՆՏԷՐՍՈՐԸ



ՀԻՒՍԻՍԵՆ ՀԱՐԱԻ

Ջանգալաւոր քիթեռնիկներ. — Ամերիկայի նշանաւոր օձին պէս, զանգալաւոր թիթեռնիկն ալ բնաւ երաժշտական գործի մը չունի մարմինին վրայ, եւ սակայն կարող է ձայն հանելու ան:

Բիմասի Հնդիկները սովորութիւն ունին սոյն թիթեռնիկին հարսնեակը ժողովել եւ արեւուն տակ չորցնելով սպաննել: Սոյն գործողութենէ վերջ թրթուրը չորս կողմէ գոցուած տեսակ մը պարկ կը ձեւացնէ, որուն մէջ պարապ է: Հնդիկը մէջը պըզտիկ քար մը կը դնէ, եւ ասանկ շատ մը թրթուրներ պատրաստելով իրար կը կապէ: Պչրասէր Բիրմաներու ամէնէն սիրական զարդն է այս, զոր կ'անցնեն իրենց վիզէն, ծունգերէն: Նուիրական պարերու ժամանակ, այս զանգակները մարմինին տատանումներուն հետեւելով՝ տարօրինակ խփրուռք մը յառաջ կը բերեն: Կերևի թէ Հնդիկները շատ կ'ախորժին այս երաժշտութենէն, թէեւ այնքան ներդաշնակ չըլլայ եւրոպական ականջներու:

Աշխարհիս ամենէն խոր անդունդը, — Ընդժովեայ հեռագրական պարաններու գետեղումը՝ հաղորդակցութեան դիւրութիւն մը բնծայելէ աւելի օգուտ ունեցած ըլլալ չերեւիր, բայց իրապէս մէկէ աւելի գիտութեան ճիւղեր ծնունդ առած են այդ ճիւղէն, օրինակի համար, Ովկեան-գրութիւնը: Առանց երկար բացատրութեան դիւրին է ըմբռնել թէ, երկրաչափները, հեռագրական պարանները ձգելէ առաջ ստիպուած էին մանրամասնօրէն հետազօտել ովկէանին խորը:

« Անդր-Սաղաղական» ի պարանին հաստատումովը, Ամերիկացի երկրաչափները Սաղաղական ովկիանոսի յատակին ամբողջական քարտէսը գծեցին: Բրոֆէսէօր Ակասի, 1900ին պաշտօն ստացաւ Սան-Ֆրանչէսքոյի եւ Հավայի արշիպելագոսի միջեւ տարածուած ովկիանոսի յատակը հետախուզել: Հոդ է որ բրոֆէսէօրը գտաւ աշխարհիս ամէնէն խոր անդունդը՝ որ 6000 մէդր խորութիւն ունի:

Բրոֆէսէօր Ակասիի հաւաքած ծանօթագրութիւնները այնքան ընդարձակ են որ հազիւ թէ քանի մը ամիսներ ետքը կարելի պիտի ըլլայ զանոնք հրատարակել: Սոյն գիւտերուն մէջ կը գտնուին նաև քանի մը տեսակ ձուկեր որոնք 4000 մէդր խորութեան մէջ կ'ապրին եւ զորս կ'անգիտանան մինչեւ ցարդ բնապատումները:

Բաղի մը գերեզմանը. — Այս օրերս Անգլիական Արքայական կաճաւը զարմանալի երեւոյթով մը կ'զբաղի, որ իր տեսակին մէջ միակն է:

Յամին շնորհաց 1602ի, Ապրիլ 3ին, Ասթըն-Ին-Թը-Ուսթըր պզտիկ գիւղին բնակիչները վայրի բադ մը տեսան որ ash-tree կոչուած տեսակէն ծառի մը վրայ նստիլն ու տերեւներէ վարագոյրի մը ետին աներեւութանանալն: Լաւ նշանառու որսորդներ սպասեցին որ թռչունը մեկնի որպէս զի զայն սպաննեն: Բնականաւոր համբերելէ վերջը սկսան քարեր նետել ծառին վրայ թռչունը վախցնելու համար, բայց բնաւ չարժու՝ մը չեղաւ տերեւներուն մէջ. բադը կենդանութեան նշան չէր տար: Ստահակ

մը ծառին վրայ ելլելով՝ աչքովը հաստատեց թէ բաղը մեկնած էր, Արդ, ո՛չ ոք տեսած էր անոր թռիլը:

Այս խորհրդաւոր դէպքը արձանագրուեցաւ գիւղին դիւաններուն մէջ եւ ծառին անունը դրուեցաւ duck tree (բաղի ծառը):

Երեք դարերու կեանքէ մը ետքը, ծառը, որ իր անունը պահած էր, ասկէ քանի մը ամիս առաջ կտրուեցաւ եւ սղոցողներու յանձնուեցաւ որ տախտակներ պատրաստեն: Երբ ծառին կոճղը մէջտեղէն կը սղոցէին, կրնաք երեւակայել գործաւորներուն ապշոթիւնը, որոնք կտրուած երկու երեսներուն վրայ տեսան բաղի մը մարմինն « հետքը » 52 սանդիմէդը՝ երկայնութեամբ եւ 20 սանդիմէդը լայնութեամբ:

Բացատրութիւնը շատ պարզ է: Երբ բաղը ծառին վրայ կը թառէր, կոճղին մէջ բացուած ծակի մը մէջ ինկաւ ուրկէ անկարելի եղաւ դուրս ելլել: Ծառն աճելով, ժամանակ ետքը՝ ծակը գոցուեցաւ ու բաղին մարմինը՝ ծառին նեարդերուն միջեւ ճընշուելով տախտակցաւ ու իր հետքը « տպուեցաւ » անոնց վրայ,

ԱՌՏՆԻՆ ԱՐՈՒԵՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

« Հանրագիտակ « այսուհետեւ՝ իւր ընթերցողաց աւելի օգտակար հանդիսանալու համար, ամէն անգամ պիտի դնէ այլ եւ այլ դեղագրերու բանաձեւեր (Ֆորմուլներ), այլ եւ այլ օգտաւէտ բաներու համար: Սոյն դեղագրերու ընթերցողներու կանոնաւոր հետեւող մը պիտի տեսնէ թէ ամէն անգամ որ « Հանրագիտակ » մը առնէ, յաճախ 30 փարայով պիտի սորոլի երբեմն արհիստ մը, երբեմն հիւանդութեան մը առջեւ անմիջապէս առնող դեղ մը, անասուններու, հսւերու, թռչուններու մասին, ինչպէս մարդոց եւ տունի կահ կարասիներու, անհրաժեշտ պէտքերու համար, որով երբեմն 30 փարայով շատ մը մեծամեծ գումարներով հազիւ ծնոք բերուելիք օգտակար բան մը, հնարք մը, շահու նոր աղբիւր պիտի սորոլի:

Դեղագիրներուն մէջ յիշուած բառերը ֆրանսերէն են, զի հայ լեզուն դեռ պաշտօնապէս դեղագործական եւ բժշկական լեզու եղած չէ: Եւ պէտք է դեղագրերը միշտ ծանօթ դեղագործներու ծեռքով պատրաստել: Պախալի, ախետի եւ այլ այսօրինակ շառլաններէ առնելու չէ դեղերը կամ նիւթերը, հոգ չէ խէ մէկ երկու դահեկան աւելի վճարէ: Իսկ մեր աւանդած դեղագրերը մասնագէտ ու փորձառու բժիշկներու գիտուններու կողմէ պատրաստուած է:

1. — ԿՈՒՂԷՖ ՈՐ ձԵՐ ՄԱՂԵՐՆ ԱՆԻՑ

Ասոր դարմանը դուք իսկ ծեր ծեռամբ կրնաք կատարել: Շինեցէք հետեւեալ օժանակը (ըմամտը). — Առէ՛ք Թարմ Մօէլ սը պեօժ (եղան ծուծ) եւ Աֆսոնժ (խոզի ճարպ) . երկուքէն ալ հինգ հինգ հեգտոկրամ: Մաղմաղ կրակի վրայ հալեցուցէք, վար առէք եւ շարժեցէք մինչեւ պաղի. վրան աւելցուցէք 16 կրամ էսանս տը պէրկամօն, 4 կրամ էսանս տը նէրոլի, 1 կրամ էսանս տը նուայեօ, 4 կրամ Թէնիլիւր գանձարիտ: Այս դեղագիրը մասնագէտ բժիշկի մը պատուիրուած է եւ արդիւնքը հրաշալի:

2. — ԿՈՒՂԷՖ ձԵՐ ՄԱՂԵՐ ԼԱՂՏՈՒՆՔՆԵՐՆԵՐ

Առէ՛ք հաւկիթներուն ճերմկուցները եւ զարկէք մինչեւ որ Թանձր փղըփուրներ կազմեն. յետոյ անով շփեցէք ծեր գլուխը, ծածկեցէք տաք լաճով մը մինչեւ հետեւեալ օրը, յետոյ սանտրեցէք:

Յառաջիկայ Կիւրակէ (20 Յուլիս), պիտի կատարուի Իւսկիւտար Իճատիէի Երանուհեան Մանկապարտէզի Հանդէսն, որ որուն հրաւիրուած են մանուկներու ծնողներն եւ ուսումնասէր հասարակութիւնը:

ՄՏԱՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ



1. — Սոյն պատկերին մէջ գծագրութեամբ արուեստակէսով ի՞նչ քերութիւններ կան:

ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ Կամ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Մինչեւ ցարդ նշանաւոր հեղինակաց կողմէ հրատարակուած Ս. Երուսաղիմայ Հին և նոր պատմական, աշխարհագրական ամէն տեսակ ծանօթութիւնները պարունակող բոլոր գրքերուն մէջ ամէնէն աւելի ճոխագոյնը եւ լիակատարը Գեր. Տրդատ Եպիսկոպոս խղճամիտ ու մանրակրկիտ կերպով նկարած է Ս. Տեղիքը իսկատիպ պատկերներով:

Ընթերցասէր հասարակութեան աւելի ևս դիւրամատչելի ըլլալու համար սոյն ՅԿ երեսէ բաղկացեալ գիրքը այժմ գինը կէս առ կէս զեղչուած եւ 6 շուրուշի կը ծախուի Յ. Աշճեան գրատունը, Կ. Պոլիս Զաքմաքճըլար:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՅՈՒՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆ Ե. ՊԷՐՊԷՐՍԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Մանգումէի տպարանին կից

Միտան մանկկապետը ասելով յոսիք, մ ասելով դք մարտադրակի
մարտեման եւ արտադրատանը զի 0 (Օ) քառուկ զգրէք ճմանման
դեղուկ միմբն մարտադրանման իմ մարտեման ասիք թախ, դանան
-մեկ զմեման իմարտիք թառարման դանան արդեմն արտանի աս (զգրէք
(զմեկքմանուկ զի ասարտադր միտան ուս) իմն

[illegible]

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԻԱՆ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ Ս. ՏԷՄԻՐԵԱՆ պատիւ
ունին ծանուցանել գրասէր հասարակութեան թէ իմասնաւորի
Գաւառի վարժարանաց տեսչութեանց դիւրութիւն մը ըլլալու
նպատակաւ նոր ԳՐԱՏՈՒՆ մը հիմնած են որ պիտի գրադի
հետեւեալ գործաւնութիւններով:

Կը հայթայթէ, թէ Մայրաքաղաքիս մէջ և թէ Գաւառներու
մէջ, Հայերէն, Թուրքերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն ու Գերմա-
ներէն հրատարակութիւններ՝ Դպրոցական Դաստագիրք, Վէպ,
Թատրերգութիւն, Գիտական Հեղինակութիւն, Պարբերական ու
Հանդէս:

Դպրոցական գրքերու և պիտոյքներու հայթայթման մասին
ամենամեծ զեղչը կուտայ (30 0/0 իր հրատարակութիւններուն
համար, իսկ միւս գրքերուն ալ համեմատական ամէնէն բարձր
զեղչը) եւ վճարումներու համար անյուսալի դիւրութիւններ կ'ըն-
ծայէ (այս մասին յատկապէս կը բանակցինք):

ՏՊԱՐԱՆ-ԳՐԱՏԱՆՍ ՀՐԱՏԱՐԱՆԻԹԻԻՆԵՐԵՆ ԵՆ			
ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ	Գործնական եւ Արհեստական (Տարրական)	3	Ղրուշ
»	» (Միջին, Ա.)	4	»
»	» (Միջին, Բ.)	5	»
ԲՆԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ	ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ (Բարձրագոյն)	7	»
ՄԵՆՏՈՐ ՄԱՆԿԱՆՑ	Աւիապէ Ֆրանսերէն	2	»
»	Երկրորդ Գիրք Ֆրանսերէնի	4	»
ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՆԿԱՆՑ	Երրորդ »	6	»
ԵԱՂԿԱՔԱՂ ՄԱՆԿԱՆՑ ԴԱՍԵՐՈՒ	Հայ Ընթերցարան	3	»
»	ՏԻՊԱՐ ԴԱՍԵՐՈՒ, Միջին Ընթերցարան	4	»
ԵԱՂԿԱՔԱՂ ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹ ԵԱՆ		4	»
ՀԻՆ ՈՒԽՏԻ (Սրբազան Պատմութիւն) ՍԱՀԱԿԵԱՆՑ		4	»
ՆՈՐ ՈՒԽՏԻ (» »)		4	»
ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ ԿԱՄ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ԵՐՈՍԱՊԷՄԻ		12	»
ԱՂԹԱԳԻՐԲ ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵԳԼՈՅ (Բ. Տիպ)		10	»
ԺՈՂՈՎԴԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՑ		6	»
ՏՕՆԱԿԱՐԳ ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵԳԼՈՅ		12	»
ԴԱՄԷԼԻԱԶԱՐԴ ՏԻԿԻՆ		8	»
ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ		10	»

Սոյն ցանկը որ կը պարունակէ իրագիտութեան, Հայ Ըն-
թերցանութեան, Ֆրանսերէնի, Կրօնագիտութեան, ամբողջական
դասընթացքներ, հետզհետէ պիտի ձորսանայ ուրիշ դասընթաց-
ներով, ամէնակարճ ժամանակի մէջ:

Գրատունս կը հայթայթէ նաեւ Մանկավարտէզի և Ֆրէ-
պէլեան նուէրներ և առարկաներ, ինչպէս նաեւ ամէն տեսակ
պիտոյք՝ թուղթ, տետրակ, մատիտ, աշխարհացոյց կամ համայ-
նապատկեր քարդեր, եւայլն:

Գրատանս Տնօրէնութիւնը իր բաղմամեայ ուսուցչական փոր-
ձառութիւնով և բաղմամբ ծանօթ ուսուցիչներու հետ ունեցած
յարաբերութիւնով կը փափաքի օգտակար ըլլալ թէ մայրաքա-
ղաքիս և թէ գաւառներու Պատ. Թաղ. Խորհրդոց, Հոգաբար-
ձութեանց և վարժարաններու տեսչութեանց, դպրոցական ամէն
տեսակ պէտքերու հայթայթումէ զատ, դիւրութիւն ընծայելով
նաեւ ուսուցիչ և վարժուհի հայթայթելու և փափաքուած պաշ-
տօնին համեմատ պաշտօնեայ շնորհիւ մասին:

Հասցէ՝

Տպագրիչ Նեան Կ. Պերպերեան

Կ. ՊՈԼԻՍ, Պապ Ալի ձատտէսի, Թիւ 38